ANNUAL REPORT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հաշվետվություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գյուտեր եւ օգտակար մոդելներ 7

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական նմուշներ 9

Ֆիրմային անվանումներ 11

Տեղեկատվական տեխնոլոգիաներ 12

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի գրանցում 14

Իրավական դաշտ 14

Միջազգային համագործակցություն 15

Հրատարակվում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ
Անդրանիկ ԽԱՉԻԿՅԱՆ
Մանվել ԲԱԲԱՅԱՆ
Գոհար ԱԴԱՄՅԱՆ

Դիզայն եւ էջատում Նաիրա ՋԵՅՐԱՆՅԱՆ

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին
Internet: http://www.armpatent.org
E-mail: armpat@cornet.am

© *ՀՀ մտավոր սեփականության գործակալություն*

ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը 2004թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված՝ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաեւ պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Միեւնույն ժամանակ լուրջ աշխատանքներ են տարվել օրենսդրական պրակտիկայի ընդհանրացման, ինչպես նաեւ բնագավառի կատարելագործման ուղղություններով, մասնավորապես մեծ ուշադրություն է դարձվել իրավական դաշտի կատարելագործման եւ միջազգային համագործակցության ընդլայնման հարցերով առաջարկությունների ձեւավորմանը, որոնք 2004թ. սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարին:

Շարունակվել են նաեւ փոքր եւ միջին բիզնեսի աջակցությանն ուղղված աշխատանքները, որոնք առաջին հերթին նպատակաուղղվել են համապատասխան խորհրդատվական ծառայությունների մատուցման ապահովմանը:

ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

2004թ. ՀՀ մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 125 գյուտի եւ 19 օգտակար մոդելի հայտ, որոնցից 129-ը՝ ազգային հայտատուներից, 15-ը՝օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 2124:

Աղյուսակ 1

Երկիրը	2003	2004
Հայաստան	156	129
Այլ երկրներ	5	15
Ընդամենը	**161**	**144**

2003թ.համեմատությամբ 2004թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը նվազել է 17-ով կամ 10,6%-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 27-ով կամ 18%-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել 10-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆեւ) ներկայացվող միջազգային եւ Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն(Մոսկվա) ներկայացվող Եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց եւ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:



A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
C. Քիմիա, մետաղագործություն
D. Մանածագործություն, թուղթ
E. Շինարարություն, լեռնագործություն
F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, զենք եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
G. Ֆիզիկա
H. Էլեկտրականություն

Նկ. 1

2004թ. գործակալությունը ստացել է գյուտի 3 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2004 թ.թ. ժամանակաընթացքում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ԺՆեւ) առաքվել է գյուտի 36 միջազգային հայտ:

2004 թ. գործակալությունը ստացել է գյուտի 1 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում այն առաքել է Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա):

Այսպիսով, 1997-2004 թ.թ. ժամանակաընթացքում Եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 8 հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում 141 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն, եւ որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 185 հայտով, ընդ որում՝

- 141 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին.
- 4 հայտով կայացվել են որոշումներ հիմնական արտոնագիր տալու մասին.
- 15 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին.
- գյուտի 5 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալը մերժելու մասին.
- 16 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը հետ կանչելու մասին.
- 4 հայտով անցկացվել է կրկնական փորձաքննություն:



Նկ. 2

2004թ. ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ. 1-ում՝ գրաֆիկի տեսքով:

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ. 2-ում:

2004թ. տրվել է 159 գյուտի արտոնագիր եւ 11 օգտակար մոդելի արտոնագիր:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

2004 թ. ազգային ընթացակարգով Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1855 հայտ (որոնցից 1598-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ:

1846 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, որի արդյունքում բոլոր հայտերն ընդունվել են քննարկման: Հետ են կանչվել 29 հայտ, իսկ 27 հայտի նկատմամբ կայացվել է մերժման մասին որոշում: Հաշվետու ժամանակաշրջանում գրանցվել են 1095 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 865-ը՝ ազգային հայտատուներից), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ. 3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 3 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, եւ կայացվել են տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին որոշումներ, որոնցից մեկը հետագայում հետ է կանչվել:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ 2004 թվականին ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին մոտ 2268 ծանուցում: Նախնական մերժման մասին որոշում է կայացվել 436, իսկ վերջնական մերժման մասին՝ 214 միջազգային գրանցումներով, ինչպես նաեւ կայացվել է ապրանքային նշանների միազգային գրանցումների զիջումները մերժելու մասին 28 որոշում:



Նկ. 3

Աղյուսակ 2

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	1598	-	1598
ԱՄՆ	71	106	177
Ավստրալիա	-	8	8
Ավստրիա	1	36	37
Բենիլյուքս	12	122	134
Բրազիլիա	7	-	7
Բուլղարիա	-	66	66
Գերմանիա	13	370	383
Դանիա	-	25	25
Եվրոպայի Միություն (OHIM)	-	19	19
Թուրքիա	4	77	81
Իռլանդիա	4	4	8
Իսպանիա	-	69	69
Իտալիա	-	174	174
Իրան	6	9	15
Լեհաստան	-	34	34
Լիխտենշտայն	-	16	16
Կորեայի Հանրապետություն	12	1	13
Լատվիա	-	4	4
Լիտվա	-	3	3
Կայմանյան կղզիներ	5	-	5
Հնդկաստան	6	-	6
Հունաստան	-	7	7
Հունգարիա	1	120	121
Ճապոնիա	10	26	36
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն	20	100	120
Շվեդիա	2	18	20
Շվեյցարիա	15	143	158

Չեխիա	-	28	28
Չինաստան	1	91	92
Ռումինիա	-	3	3
Ռուսաստանի Դաշնություն	27	278	305
Սլովակիա	-	16	16
Սլովենիա	-	13	13
Ֆինլանդիա	-	1	1
Ֆրանսիա	5	158	163
Այլ երկրներ	35	123	158
Ընդամենը	**1855**	**2268**	**4123**

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 5 հայտ:

2003 թ. համեմատությամբ 2004 թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է՝ 693-դիմաց (2003թ.) 1598 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով (234- ի (2003թ.) դիմաց 257):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 41 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 24-ը՝ ազգային հայտատուներից, 1-ը՝ ԱՄՆ-ից, 4-ը՝ Ճապոնիայից, 1-ը՝ Շվեյցարիայից, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 4-ը՝ Կորեայի Հանրապետությունից, 2-ը՝ Կիպրոսից,3-ը՝ Հնդկաստանից): Դրանցից 3-ը հետ են կանչվել, իսկ 38-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին:

2003 թ. համեմատությամբ ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը աճել է (6-ի (2003թ.) դիմաց 24), իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նույնն է:

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2004թ. ստացվել է ֆիրմային անվանման գրանցման 3370 հայտ:

Գրանցվել է ընդամենը 3217 անվանում, մերժվել է 153-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հուլիսի 7-ի 289 որոշման, ֆիրմային անվանման մեջ "հայ", "Հայաստան", "հայկական" բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 13 թույլտվություն, որը 2003թ. համեմատությամբ 2-ով ավելի է :

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2004 թ. լազերային սկավառակներով հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ № 1(29), № 2 (30), №3 (31) եւ № 4 (32): Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 197 գյուտի, 11 օգտակար մոդելի, 23 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1000 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների, 2000-2002 թ.թ. գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին, ինչպես նաեւ տեղեկություններ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (65 գրանցում):

Իրականացվել են 197 գյուտի եւ 11 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների եւ հավակնության սահմանումների էլեկտրոնային ծեւերի, ինչպես նաեւ 23 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը եւ հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Հրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

Հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով հրապարակվել է Հայարտոնագրի 2003թ. տարեկան հաշվետվությունը լազերային սկավառակով: Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2003 թ. տեխնիկական եւ վիճակագրական հաշվետվությունները գյուտերի եւ օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ:

«Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրերը եւ Հայարտոնագրի 2003 թ. տարեկան հաշվետվությունները տեղադրվել են ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի, Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Հայաստանի ազգային գրադարան ու Հայաստանի ազգային գրապալատ: Սկսած 2004 թ. պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվում են նաեւ ՀՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 եւ տարեկան հաշվետվությունը՝ 23 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի

թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ սկավառակներ, որոնց 4 համարներում զետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 197 գյուտի եւ 37 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները ընթացքում են: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական, Ամերիկայի Միացյալ Նահանգների եւ Ավստրիայի արտոնագրային գերատեսչություններից կոմպակտ սկավառակներով:

2004թ. սեպտեմբերից Եվրասիական արտոնագրային գերատեսչության հետ համատեղ գործակալությունն ստեղծել է տեղեկատվական որոնման համակարգ իր ինտերնետային հիմնական էջում գյուտերի եւ օգտակար մոդելների մասով՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Տեղեկատվական որոնման համակարգը, որը ստեղծվել է EAPATIS տարածաշրջանային Եվրասիական արտոնագրային տեղեկատվական համակարգի հիման վրա, թույլ է տալիս կատարել որոնում հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Այդտեղ ընդգրկվում են արտոնագրային փաստաթղթերը հայերեն եւ ռուսերեն լեզուներով՝ սկսած առաջին գրանցումից մինչեւ այժմ, ներառյալ «տիտղոսաթերթերը» եւ լրիվ նկարագրությունները (միայն հայերեն լեզվով), իսկ սկսած 2002թ.-ից՝ նաեւ անգլերեն լեզվով: Տվյալ համակարգը թույլ կտա բոլոր շահագրգիռ անձանց ազատ մուտք ունենալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի եւ օգտակար մոդելների հիմնապաշարներ: Ներդրվել է EAPATIS որոնման համակարգը, որը գործակալության գյուտերի եւ օգտակար մոդելների բաժնի փորձագետներին հնարավորություն է տալիս որոնում կատարել մի շարք զարգացած երկրների ավելի քան 15մլն արտոնագրային փաստաթղթերում:

Գործակալության տեղեկատվական հիմնապաշարը համալրվել է կոմպակտ սկավառակների վրա զետեղված Ռուսաստանի Դաշնության արտոնագրային տեղեկատվությամբ՝ սկսած 1924 թ.- ից առ այսօր: Շարունակվում է լազերային սկավառակներով «ROMARIN» ապրանքային նշանների որոնման համակարգերի, ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը ՄՍՀԿ-ից, BREF եւ COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը Ֆրանսիայից :

Թարմացվել են գործակալության ինտերնետային կայքի «Կոնտակտային ինֆորմացիա» եւ «Արտոնագրային հավատարմատարներ» ենթաէջերը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է Pentium 4 տեսակի համակարգիչներով, համակարգչային օժանդակ սարքերով եւ սարքավորումներով, այդ թվում՝ տպիչներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգում շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները եւ բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով մշակվել են ՀՀ մտավոր սեփականության տեղեկատվական համակարգի հետեւյալ ենթահամակարգերը՝ «Ապրանքային նշանների» ենթահամակարգի երրորդ վարկածը, «Պատվերով որոնում» հիմնապաշարի երկրորդ վարկածը, «Միջազգային հայտերի ընդունման հիմնապաշարի երկրորդ վարկածը»: ՀՀ մտավոր սեփականության տեղեկատվական համակարգը համալրվել է հետեւյալ ենթահամակարգերով՝ «Արդյունաբերական նմուշների տեղեկատվական ենթահամակարգով», «Ապրանքի ծագման տեղանունների ենթահամակարգով» եւ «Հանրահայտ ապրանքային նշանների հիմնապաշարով», որոնք օժտված են հետեւյալ հնարավորություններով՝ մատե-

նագիտական տվյալների կուտակման, տուրքերի կուտակման եւ հաշվառման, նամակագրության ավտոմատացման, վիճակագրական տվյալների ամփոփման, մատենագիտական տվյալների հրապարակման եւ տեղեկությունների որոնման:

Իրականացվել են Windows 2000/XP համակարգերի եւ Microsoft office-ի տեղադրում եւ կարգաբերում, օպերացիոն համակարգի սպասարկում, համակարգչային ծրագրերի տեղադրում եւ կարգաբերում, վնասված համակարգիչների եւ ծրագրերի ախտորոշում եւ անսարքության վերացում, գյուտերի, օգտակար մոդելների, ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների հիմնապաշարների տեղադրում:

Իրականացվել են HP surestore dat autoloader արխիվացման սարքի և Veritas Backup Exec ծրագրի տեղադրում և կարգաբերում, տվյալների արխիվացման ռազմավարության մշակում:

Գործակալություն են այցելել Ռումինիայի եւ Մոլդովայի արտոնագրային գերատեսչությունների ղեկավարները եւ մասնագետներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում փորձի փոխանակման նպատակով :

ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ԵՎ ՁԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2004թ. ընթացքում քննարկվել եւ գրանցվել են 69 պայմանագրեր, որոնցից 60-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 8-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին եւ մեկը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2004թ. շարունակվել են բնագավառի իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, մասնավորապես նախապատրաստվել եւ սահմանված կարգով ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարին են ներկայացվել համապատասխան առաջարկություններ, որոնց հիման վրա ընդունվել են բնագավառին վերաբերող չորս օրենքներ՝ «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքը, «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Ընդլայնվել են նաեւ միջազգային համագործակցության հարցերով առաջարկությունների ձեւավորմանը վերաբերող աշխատանքները: 2004 թ. Հայաստանի Հանրապետությունը միացավ վեց միջազգային պայմանագրերի՝ Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման մասին Բուդապեշտի պայմանագրին, Նշանների գրանցման նպատակներով ապրանքների եւ ծառայությունների Միջազգային դասակարգման վերաբերյալ Նիցայի համաձայնագրին, Միջազգային արտոնագրային դասակարգման մասին Ստրասբուրգյան համաձայնագրին, Նշանների պատկերային տարրերի միջազգային դասակարգումը հիմնադրող Վիեննայի համաձայնագրին, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Հեղինակային իրավունքի պայմանագրին եւ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Կատարումների և հնչյունագրերի պայմանագրին, որոնք Հայաստանի Հանրապետության համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ չեն առաջացնում եւ էլ ավելի լիարժեք են դարձնում բնագավառի իրավական դաշտը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության գործակալությունը համագործակցում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՄՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱԳ) հետ: Գործակալությունը մասնակցում է ոլորտում նոր պայմանագրերի դրույթների քննարկմանը, համագործակցության պայմանագրեր է կնքում ԱՊՀ երկրների ու օտարերկրյա արտոնագրային գերատեսչությունների, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հետ: Գործակալության մասնագետները մասնակցում են միջազգային եւ օտարերկրյա կազմակերպությունների կողմից կազմակերպված սեմինարներին, վերապատրաստումներին, դասընթացներին եւ այլն:

2004թ. ընթացքում գործակալության 12 մասնագետներ մասնակցել են ՄՄՀԿ աշխատանքային մարմինների առավել կարեւոր նիստերին, ինչպես նաեւ ԵԱԳ կազմակերպած սեմինարներին:

ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության եւ Ռումինիայի գյուտերի եւ ապրանքային նշանների պետական գրասենյակի միջեւ արդյունաբերական սեփականության պաշտպանության ոլորտում համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում 2004 թ. Ռումինիայի արտոնագրային գերատեսչության պատվիրակությունը տնօրենի գլխավորությամբ պաշտոնական այցով ժամանեց Հայաստանի Հանրապետություն: Այցի ընթացքում պատվիրակությունը հյուրընկալվեց գործակալության կողմից, ծանոթացավ գործակալության աշխատանքներին:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության մասնագետները մասնակցել են Եվրասիական արտոնագրային գերատեսչության (Մոսկվա) տարբեր աշխատանքային խմբերի նիստերին, որտեղ ՀՀ-ի քվոտաների հաշվին աշխատում են գործակալության երեք փորձագետներ:

2004 թ. գործակալության երեք մասնագետներ մասնակցել են Ժնեւում, Լոնդոնում, Վիեննայում կազմակերպված ուսուցողական ծրագրերին: Ծրագրերը կազմակերպել եւ ֆինանսավորել էր ՄՄՀԿ միջազգային ակադեմիան: